Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 778 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՇԽԱՏՈՂ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի պայման ապահովող աշխատող աուդիտորների մասով «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պահանջների կիրառման հետ կապված հարցերը:

2. Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված են աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու իրավունք ունեցող սուբյեկտները, ինչպես նաև նրանց ներկայացվող պահանջները: Այդ պահանջները պարտադիր կիրառման ենթակա են ինչպես լիցենզիա ստանալու համար, այնպես էլ՝ դրանից հետո՝ աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում:

3. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պահանջն այն մասին, որ լիցենզիա ստանալու համար կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 աշխատող աուդիտոր, որոնցից 3-ը այլ գործատուի մոտ չպետք է աշխատեն, վերաբերում է նաև լիցեզիա ստանալուց հետո իրականացվող հարաբերություններին: Աուդիտորական կազմակերպությունները պարտավոր են ապահովել իրենց լիցենզիաների պահանջները՝ լիցենզիայի պայման ապահովող և աշխատանքային պայմանագրով

որպես աուդիտոր աշխատող բոլոր աուդիտորների մասով, և յուրաքանչյուր տարվա ընթացքում նրանց ներգրավել բուն աուդիտի անցկացման կամ աուդիտորական դիտարկման աշխատանքներում:

4. Եթե աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի պայման ապահովող և աշխատանքային պայմանագրով որպես աուդիտոր աշխատող աուդիտորը մեկ տարվա ընթացքում չի պահպանել սույն կարգի 3-րդ կետում նշված պահանջները, ապա նա չի կարող համարվել օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված լիցենզիայի պայման ապահովող աուդիտոր, և այդ փաստը դիտվում է որպես լիցենզիայի պայմանի խախտում:

5. Ընդունել ի գիտություն, որ գործող աուդիտորական կազմակերպությունների համար առնվազն 5 աշխատող աուդիտորներ (որոնցից 3-ը՝ հիմնական, 2-ը՝ համատեղությամբ) ունենալու պահանջը գործում է 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ